**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 14.08.2019թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

## թիվ ԳԲՔԱ-LO-2019/55

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ

Բողոք բերող՝ «Արմա Թրեյդ» ՍՊԸ

Երրորդ անձ՝ «Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝

Պատվիրատուի ներկայացուցիչ՝ Լ. Բարսեղյանի

Բողոք բերողի ներկայացուցիչ՝ Մ. Շահնազարյանի

Երրորդ անձի ներկայացուցիչ՝ Կ. Ռուստամյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-27/19» ծածկագրով գնանշման հարցում, փողոցային արտաքին լոսավորության լուսադիոդային (LED) լուսատուների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Բողոքաբեր) կողմից 26.07.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1 .Պարտավորեցնել «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-27/19» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին դադարեցնել 27.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով հաղթող մասնակիցներ ճանաչել 1-ին չափաբաժնի մասով «Էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ին իսկ 2-րդ չափաբաժնի մասով «Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ-ին հաղթող մասնակիցներ ճանաչելու և վերջիններիս հետ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու մասին որոշումները:

2. Պարտավորեցնել «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-27/19» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին դադարեցնել 1-ին չափաբաժնի մասով «Էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ի և 2-րդ չափաբաժնի մասով «Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 12.07.2019թ.-ին:

15.07.2019թ.-ին այն վերադարձվել է՝ բողոքում առկա խախտումները վերացնելու համար:

Բողոքը կրկին՝ վերադարձնելուց հետո Բողոքներ քննող անձին է մակագրվել 26.07.2019թ.-ին:

26.07.2019թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 06.08.2019թ. նշանակվել է նիստ:

06.08.2019թ. -ին «Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ-ն ներգրավվել է որպես երրորդ անձ:

Բողոքի քննությունն ավարտվել է 06.08.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 14.08.2019թ.-ին:

**2. <u>«Արմա Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.**

«Արմա Թրեյդ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

*««Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ ՀԿՀ-ի կարիքների համար փողոցային արտաքին լուսավորության լոսադիոդային (LED) լուսատուների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-27/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտերի հիման վրա 27.06.2019թ թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն հաղթող մասնակիցներ ճանաչեց 1-ին չափաբաժնի մասով «Էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ին իսկ 2-րդ չափաբաժնի մասով «Եղիսաբեթ Ալմազյան» ԱՁ-ին: Նույն արձանագրության նույն կետով առաջարկեց մասնակիցներին 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը: Գնահատող հանձնաժողովի 09.07.19 թ-ի թիվ 3 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները:*

*Առաջարկվել է անգործության ժամկետից հետո պայմանագիր կնքել 1-ին չափաբաժնի մասով «Էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ի և 2-րդ չափաբաժնի մասով «Եղիսաբեթ Ալմազյան» ԱՁ-ի հետ:*

*09.07.19թ-ին «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ն խնդրել է ուղղարկել «Էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ի և «Եղիսաբեթ Ալմազյան» ԱՁ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող բոլոր փաստաթղթերը, որին ի պատասխան՝ հաջորդ օրը ընթացակարգի գնահատող հանձնաժողովը տրամադրել է այդ փաստաթղթերը:*

*Այնուհետև «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ն խնդրել է, որպեսզի պատվիրատուն պահպանի Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից հրապարակված կանոնակարգի կանոնները և հաղթող մասնակիցներից պահանջի սերտիֆիկատներ որոնք կհանդիսանան սույն ապրանքների համար համապատասխանության հավաստում: Պատվիրատուի կողմից մեզ ներկայացվեցին սերտիֆիկատներ (կցվում են), որոնք համապատասխան չեն նշված ստանդարտներին:*

- *«Էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված սերտիֆիկատում նշված են ապրանքներ, որոնք ոչ մի կապ չունեն պատվիրատուի կողմից նշված ապրանքների հետ:*

- *«Եղիսաբեթ Ալմազյան» ԱՁ-ի կողմից ներկայացված փաստաթուղթը կամ պետք է լիներ ԵԱՏՄ-ի կողմից սահմանված ստանդարտով կամ պետք է Հայաստանում անցներ համապատասխան փորձարկում, որը կփաստեր տվյալ սերտիֆիկատների բավարար և արժեքային լինելը:*

*ՀՀ կառավարության 04.05.2017թ 526-Ն որոշմամբ, «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 46-րդ կետի համաձայն՝*

*Սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:*

*47. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:*

*48. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝*

*1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.*

*2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:*

*Ինչպես արդեն հայտնել ենք, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ ՀԿՀ-ի կարիքների համար փողոցային արտաքին լուսավորության լուսադիոդային (LED) լուսատուների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-27/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտերի հիման վրա 27.06.19թ Արձանագրություն 2–ի 4-րդ կետի համաձայն հաղթող մասնակիցներ ճանաչեց 1-ին չափաբաժնի մասով «էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ին իսկ 2-րդ չափաբաժնի մասով «Եղիսաբեթ Ալմազյան» ԱՁ-ին: Նույն արձանագրության նույն կետով առաջարկեց մասնակիցներին 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը: Գնահատող հանձնաժողովի 09.07.19 թ-ի թիվ 3 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները:*

*Համաձայն որի՝ առաջարկվել է անգործության ժամկետից հետո պայմանագիր կնքել 1-ին չափաբաժնի մասով «էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ի և 2-րդ չափաբաժնի մասով «Եղիսաբեթ Ալմազյան» ԱՁ-ի հետ:*

*Համաձայն հրավերի տեխնիկական բնութագրի*

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 34921470 | Փողոցային արտաքին լոաավորության լոաադիոդային (LED) լոաատուներ (80W) | ցանկացած | 1. «Փողոցային արտաքին լոաավորության լոաադիոդային (LED) լոաատուների ձեռքբերում» (80W)<br>1. Աշխատանքային լարում - 180 –250V<br>2. Աշխատանքային հաճախականություն - 50 ±10HZ<br>3. Հզորությունը - 80 W<br>4. Քաշը - 2 կգ և ավելի<br>5. Իրանի նյութը - ձուլված ալյումին |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | 6.Լոաադիոդների մոդուլի պաշտպան-վածությունը – IP66<br>7. Փոխկապակցված գունային ջերմաստիճան - 4000 -5000 K<br>8. Աշխատանքային ջերմաստիճան - (-30) +400C<br>9. Լոաատուները պետք է ապահովեն առնվազն 100 լյումեն /վտ լոաարձագման գործակից<br>10.Օպտիկական մասի պաշտպանություն–կոփած պաշտպանիչ ապակի<br>11. Լոաատուի ուղղահայաց կարգավորում – կարգավորվող<br>12. Կցորդման տրամագիծ – 48-50 մմ: |

«էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում՝ ապրանքի անվանում դաշտում նշել է սխալ անուն պահանջվող 80W-ի փոխարեն նշելով 60-100W: Հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքային ջերմաստիճան Աշխատանքային ջերմաստիճան - (-30) +400C-ի փոխարեն ներկայացված է Աշխատանքային ջերմաստիճան - (-20) –50C:

Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից հրապարակված կանոնակարգի համաձայն սույն մրցույթում ներառված ապրանքները պետք է անցնեն լաբորատոր փորձարկում, որի արդյունքում տրամադրվում է սերտիֆիկատ: (Հիմք՝ «Ցածրավոլտ սարքավորումների անվտանգության մասին» մաքսային միության տեխնիկական կանոնակարգ՝ հաստատված ՄՄ (ԵԱՏՄ) հանձնաժողովի 2011 թ-ի օգոստոսի 16-ի N 768 որոշմամբ և ՀՀ կառավարության N 1010-Ն որոշման մեջ նկարագրվում է մաքսային մարմինների կողմից տեխնիկական կանոնակարգերով

*նախատեսված համապատասխանության պարտադիր գնահատման ենթակա արտադրանքի մասին տեղեկատվությունը ներկայացնելու կարգը):*

*«Ցածրավոլտ սարքավորումների անվտանգության մասին» մաքսային միության տեխնիկական կանոնակարգի Համաձայն հոդված 1-ի համաձայն ցածրավոլտ սարքավորումներին, որոնց վրա տարածվում է մաքսային միության սույն տեխնիկական կանոնակարգի գործողությունը, դասվում են 50-ից 1000Վ անվանական լարմամբ փոփոխական հոսանքով և 75-1500Վ անվանական լարմամբ հաստատուն հոսանքով աշխատող՝ օգտագործման համար նախատեսված էլեկտրական սարքավորումները:*

*Համաձայն հոդված 3-ի, որտեղ ներկայացվում են շուկայի շրջանառության կանոնները, ցածրավոլտ սարգավորումները շուկայում շրջանառության մեջ են դրվում Մաքսային միության սույն կանոնակարգին, ինչպես նաև Մաքսային միության, ԵՎրԱՀԵՍ-ի՝ դրանց վրա տարածվող այլ տեխնիկական կանոնակարգերին համապատասխանելու դեպքում և պայմանով որ դրանք ստացել են համապատասխանության հավաստում՝ Մաքսային միության սույն կանոնակարգի 7-րդ հոդվածի, ինչպես նաև Մաքսային միության, ԵՎրԱՀԵՍ-ի՝ դրանց վրա տարածվող այլ տեխնիկական կանոնակարգերի համաձայն:*

*Համաձայն հոդված 6-ի որտեղ ներկայացվում են անվտանգության պահանջներին համապատասխանության ապահովումը՝ Ցածրավոլտ սարքավորումների հետազոտությունների (փորձարկումների) և չափումների մեթոդները սահմանվում են Ստանդարտների ցանկում ընդգրկված՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների կիրառելու և կատարելու և արտադրանքի համապատասխանության գնահատում (հավաստում) իրականացնելու համար անհրաժեշտ (փորձարկումների) և չափումների կանոններն ու մեթոդները, այդ թվում՝ նմուշառման կանոնները ներառող ստանդարտներում:*

*Բողոքներ քննող անձի ուշադրությունն եմ հրավիրում հետևյալ հանգամանքի վրա, որ փաստորեն շատ մասնակիցներ մրցույթին մասնակցելով և չունենալով համապատասխան և օրենքով պարտադիր և անվտանգության նկատառումներից բխող այս համապատասխանության պարտադիր գնահատման ենթակա արտադրանքի համապատասխան թույտվություն պատվիրատուին առաջարկում են ավելի էժան գին և հեշտությամբ դուրս մղում այն մասնակիցներին որոնք, հավելյալ գումար ծախսելով*

*որպեսզի պահպանեն անվտանգության կանոնները, պատվիրատուին առաջարկում են ավելի թանկ գին ելնելով ապրանքի անվտանգ լինելու փաստից:*

*Վերը նշվածից փաստեմ, որ տվյալ ապրանքների վաճառքը թույլատրելի է պայմանով որ դրանք ստացել են համապատասխանության հավաստում:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի "ա" ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների և անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.*

*ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ*

*բ. պարտավորեցնել ընդունել համապատասխան որոշումներ, ներառյան՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:»:*

Ելնելով վերոգրյալներից, Բողոքներ քննող անձին Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1 .Պարտավորեցնել «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-27/19» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին դադարեցնել 27.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով հաղթող մասնակիցներ ճանաչել 1-ին չափաբաժնի մասով «Էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ին, իսկ 2-րդ չափաբաժնի մասով «Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ-ին հաղթող մասնակիցներ ճանաչելու և վերջիններիս հետ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու մասին որոշումները:

2. Պարտավորեցնել «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-27/19» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին դադարեցնել 1-ին չափաբաժնի մասով «Էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ի և 2-րդ չափաբաժնի մասով «Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

**3. <u>ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 30.07.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու)՝

հնարավորություն տալով «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 26.07.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 02.08.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

*««Արմա Թրեյդ» ՍՊԸ-ն 11.07.2019թ.-ին դիմելով գնահատող հանձնաժողովին խնդրել է ներկայացնել ԵԱՏՄ կամ Հայաստանում լաբորատոր փորձարկում անցած ապրանքներին վերաբերող սերտիֆիկատները:*

*Հայտնում եմ, որ մեր կողմից մրցութային հրավերով սերցիֆիկատներ ներկայացնելու պահանջ չի սահմանվել: Ամեն դեպքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը դիմել է հաղթած մասնակիցներին, խնդրելով տրամադրել լաբորատոր փորձարկում անցած ապրանքների սերտիֆիկատները: Հաղթած մասնակիցները պատճառաբանել են որ, ապրանքները դեռ Հայաստանի Հանրապետություն չեն ներմուծվել ճանապարհին են և չեն կարող հիմա տրամադրել պահանջված ապրանքների սերտիֆիկատները, կարեղ են դրամադրել նախկինում ներմուծվաց ապրանքների սերտիֆիկատները, որոնք ուղարկվել են «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ի պաշտոնական էլ.հասցեին:*

*«Արմա Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքի վերաբերյալ մեր կարծիքը հետևյալն է՝ մասնակիցը 12.07.2019թ. բողոք է ներկայացրել Գնումների Բողոքարկման խորհուրդին, ներկայացված բողոքին կից չի ներկայացվել բողոքը ներկայացրած անձի անձը հաստատող փաստաթղթի պատճեն: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 50-րդ հոդվածի 3-րդ մասի Ձեր կողմից բողոքը վերադարձվել է առկա թերությունները վերացնելու համար:*

*Մասնակիցը օրենքով սահմանված ժամկետում չի շտկել առկա թերությունները: Պատվիրատուն անգործության ժամկետի ավարտից հետո (09.07.2019թ.-14.07.2019թ) օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ծանուցել է ընտրված մասնակիցներին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:*

*Հավելենք, որ մեր կարծիքով 26.07.2019թ. «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացած Բողոքը համաձայն օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի ժամանակավրեպ է և ենթակա չէ քննարկման:»:*

**4. <u>Երրորդ անձ «Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ թիվ «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-27/19» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ ճանաչված «Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ-ն ներգրավվել է որպես երրորդ անձ (այսուհետ՝ Երրորդ անձ):

Ներկայանալով նիստին՝ Երրորդ անձի ներկայացուցիչը հայտնել է, որ «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-27/19» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված չէ համապատասխանության հավաստման և/կամ փորձարկման հանգամանքի առկայություն, հետևաբար մասնակիցները չեն կարող ունենալ բողքում նշված փաստաթղթերը ներկայացնելու որևէ պարտավորություն:

**5. <u>ԳԲՔԱ-LO-2019/55 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) կարիքների համար արտաքին լուսավորության լուսադիոդային (LED) լուսատուների ձեռքբերման նպատակով 20.06.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-27/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտեր են ներկայացրել բացի այլ մասնակիցներից նաև «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ն, «Էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ն և «Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 27.06.2019թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ են ճանաչվել՝ 1-ին չափաբաժնի մասով «Էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ն, իսկ 2-րդ չափաբաժնի մասով «Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ-ն:

Նույն արձանագրությամբ առաջարկվել է մասնակիցներին 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովի 09.07.2019թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի

հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները և առաջարկվել է անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքել 1-ին չափաբաժնի մասով «էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ի և 2-րդ չափաբաժնի մասով «Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ-ի հետ:

Պատվիրատուի կողմից 09.07.2019թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

«ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-27/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

1-ին չափաբաժնի համար՝ «Փողոցային արտաքին լուսավորության լուսադիոդային (LED) լուսատուների ձեռքբերում» (80W)

1. Աշխատանքային լարում - 180 – 250 V
2. Աշխատանքային հաճախականություն - 50 ± 10 HZ
3. Հզորությունը - 80 W
4. Քաշը - 2 կգ և ավելի
5. Իրանի նյութը - ձուլված ալյումին
6. Լուսադիոդների մոդուլի պաշտպանվածությունը – IP 66
7. Փոխկապակցված գունային ջերմաստիճան - 4000 -5000 K
8. Աշխատանքային ջերմաստիճան - (-30) + 400 C
9. Լուսատուները պետք է ապահովեն առնվազն 100 լյումեն /վտ լուսարձագման գործակից
10. Օպտիկական մասի պաշտպանություն – կոփած պաշտպանիչ ապակի
11. Լուսատուի ուղղահայաց կարգավորում – կարգավորվող
12. Կցորդման տրամագիծ – 48-50 մմ:

2-րդ չափաբաժնի համար՝ (100W)

1. Աշխատանքային լարում - 180 – 250 V
2. Աշխատանքային հաճախականություն - 50 ± 10 HZ
3. Հզորությունը - 100 W
4. Քաշը - 3 կգ և ավելի
5. Իրանի նյութը - ձուլված ալյումին
6. Լուսադիոդների մոդուլի պաշտպանվածությունը – IP 66

7. Փոխկապակցված գունային ջերմաստիճան - 4000 -5000 K

8. Աշխատանքային ջերմաստիճան - (-30) + 400 C

9. Լուսատուները պետք է ապահովեն առնվազն 100 լյումեն /վտ լուսարձագման գործակից:

10. Օպտիկական մասի պաշտպանություն – կոփած պաշտպանիչ ապակի

11. Լուսատուի ուղղահայաց կարգավորում – կարգավորվող

12. Կցորդման տրամագիծ – 48-50 մմ:

## 6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 26.07.2019թ. ներկայացված բողոքն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոռում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական

բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված

լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կարիքների համար արտաքին լուսավորության լուսադիոդային (LED) լուսատուների ձեռքբերման նպատակով 20.06.2019թ.-ին հայտարարված ընթացակարգին մասնակցելու նպատակով, բացի այլ մասնակիցներից հայտեր են ներկայացրել նաև «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ն, «Էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ն և «Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 27.06.2019թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ են ճանաչվել՝ 1-ին չափաբաժնի մասով «Էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ն, իսկ 2-րդ չափաբաժնի մասով «Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ-ն:

Նույն արձանագրությամբ առաջարկվել է մասնակիցներին 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովի 09.07.2019թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները և առաջարկվել է անգործության ժամկետից հետո պայմանագիր կնքել 1-ին չափաբաժնի մասով «Էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ի և 2-րդ չափաբաժնի մասով «Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ-ի հետ:

Պատվիրատուի կողմից 09.07.2019թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

«ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-27/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված չէ ապրանքների համապատասխանության հավաստման և/կամ փորձարկման վերաբերյալ փաստաթուղթ ներկայացնելու պահանջ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ հրավերով նախատեսվում է, որ ապրանքների գնման դեպքում մասնակիցն առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը:

Տվյալ դեպքում Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ի և «Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով ներկայացվել է ապրանքի տեխնիկական բնութագրերը, որը ամբողջությամբ համապատասխանում է Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին, որպիսի պայմաններում «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն ենթակա է մերժման:

Բողոքներ քննող անձը արձանագրում է նաև, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նշված իրավանորմի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները բողոքարկելու իրավունքը, վերջինիս իրացման համար նախատեսելով կոնկրետ ժամանակահատված:

Սույն դեպքում մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը բողոքաբերի կողմից գնման առարկայի բնութագրերի հետ կապված որևէ բողոք չի ներկայացվել, այլ նաև գնման հայտ է ներկայացրել «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-27/19» ծածկագրով ընթացակարգին

մասնակցելու նպատակով, որն էլ իր հերթին ապացուցում է այն հանգամանքը, որ «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ն հրավերի պահանջների նկատմամբ ի սկզբանե առարկություններ չի ունեցել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

«Արմա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 26.07.2019թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/55 բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**